ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. փետրվարի 20-ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Վայք քաղաքի բնակիչներ Վերենիկ Ավագյանի,Սեդա Ավագյանի, Եղեգնաձոր քաղաքի բնակիչներ Աշոտ Հարությունյանի, Գևորգ Գևորգյանի, Արթուր Սարգսյանի, Աչո Հակոբյանի, Հորս գյուղի բնակիչ Միխաիլ Մովսեսյանի, Քարագլուխ գյուղի բնակիչ Արմենակ Մելքոնյանի դիմումները ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով,:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից Վայք քաղաքի բնակիչներ Սեդա Ավագյանին,Վերենիկ Ավագյանին,Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Արթուր Սարգսյանին,Քարագլուխ գյուղի բնակիչ Արմենակ Մելքոնյանին պետական պատվերի շրջանակներում տրամադրել <<Ջերմուկ>> առողջարանի ուղեգիր, իսկ Եղեգնաձոր քաղաքի բնակիչներ Գևորգ Գևորգյանին, Աշոտ Հարությունյանին, Աչո Հակոբյանին, Հորս գյուղի բնակիչ Միխաիլ Մովսեսյանին պետական պատվերի շրջանակներում տրամադրել <<Գանձաղբյուր>> առողջարանի ուղեգիր:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ց.Բաբայան